«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 20.05.2017թ.ժամը 15.15

Համաձայն,21.04.2017թ-ին «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 17/17-04 գրությունը «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու մասին,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչի վարքագծերի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու համար,11.05.2017թ-ին հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական չկայացած և 20.05.2017թ-ին ժամը 15.00-ին հետաձգված,հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Գևորգ Ֆելիքսի Գևորգյանը:
Դիմումատու՝«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի տնօրեն՝Ս.Երոյանը :

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Գևորգ Ֆելիքսի Գևորգյանը:
Դիմումատու նույն ընկերության տնօրեն՝Ս.Երոյանը պատշաճ ծանուցված էր նիստի տեղի և ժամի վերաբերյալ,բայց նիստին չէր ներկայացել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 17/17-04 գրությունը «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու մասին,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչի վարքագծերի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված Գրությունը կից փաստաթղթերը և սնանկության գործով կառավարիչ՝Գ.Գևորգյանից ստացված դիմումի պատասխանը և կից փաստաթղթերը, առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ՝Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված դիմումում դիմումատուն փորձել է ներկայացնել սնանկության գործով ժամանակավոր կառավարչի և նախկինում որպես փաստաբան հանդես եկած նույն մարդու գործարար կապը պարտատեր ընկերության հետ, որպես կառավարչի էթիկայի կանոնների խախտում,որի մասին կառավարչը պետք է հայտներ ինքնակարգավորվող կազմակերպությանը/Էթիկայի Կանոններ՝8-րդ հոդված,2.7 կետ/:

Դիմումատուն հաշվի չի առել,որ նոկյն հոդվածը սկսում է.

- Կառավարիչը պարտավոր է հաղորդել Ինքնակարգավորվող կազմակերպությանը բոլոր փաստերի մասին,որոնք կարող են ազդել սնանկության գործում նրա անկողմնակալության վրա,ինչպիսիք են…..:

Եթե կառավարիչը տարակույս ունի սնանկության գործում իր անկողմնակալության հարցում նշված հանգամանքների հնարավոր ազդեցության առթիվ,ապա նա պարտավոր է այդ մասին հայտնել Ինքնակարգավորվող կազմակերպությանը:

Վերլուծելով կանոնը հասկանալի է դառնում որ կառավարիչը պետք է կասկածի կամ պետք է ունեա տարակույս,որ իր նախկին գործարար կապը կարող է իրեն խանգարել վարելու այդ գործը և լինել անկողմնակալ,որպիսի դեպքում միայն նրան պարտադրվում է հայտնել այդ տարակուսանքի կամ կասկածանքի մասին՝ Ինքնակարգավորվող կազմակերպությանը:

Տվյալ դեպքում Գ.Գևորգյանը հանդիսացել է «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ և կատարել է ընդհամենը մի գործողություն՝գրությամբ տեղյակ է պահել պարտապան ընկերությանը սնանկության դիմումի և այդ փուլում պարտապանի պարտականությունների վերաբերյալ և ստացել է պատասխան որ պահանջը անբողջությամբ բավարարված է:

Այլ գործողություններ ժամանակավոր կառավարիչը այս դեպքում չի կատարել և նրա անաչառության մասին քննարկելու նյութ չկա:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ համաձայն «Կարգապահական վարույթի անցկացման Կարգի» 2-րդ կետի համաձայն.

-Կարգապահական վարույթներ հարուցվում են հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

ա/…

բ/…

գ/Բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ինչպես նաև ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումների հիման վրա:

Սույն կետի /գ/ ենթակետի հիման վրա կարգապահական վարույթներ հարուցվում են միայն,դիմումատուի օրենքով երաշխավորված իրավունքների խախտման փաստի առկայության պայմաններում:

Այսինքն դիմումատուն այս դեպքում հանդիսանում է իրավաբանական անձ և նա պետք է ապացուցներ ներկայացներ կամ նշեր թե իր օրենքով երաշխավորված որ իրավունքն է խախտել սնանկության գործով կառավարչի էթիկայի այս կամ այն խախտումը:

«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի տնօրեն ՝Ս.Երոյանը,նման նշումներ չի արել և չի վկայակոչել ոչ մի փաստ, որ սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝Գ.Գևորգյանի,նախկինում պարտատիրոջ հետ ունեցած գործնական կապը ազդել է կառավարչի անաչառության,անկողմնակալության վրա և դրանով խախտվել է իր կամ իր ղեկավարած կազմակերպության որևե օրինական շահ,ավելին նա իր բերած փաստերով և կատարած վճարումով ապացուցել է,որ պարտատիրոջ հանդեպ իսկապես ունեցել է ժամկետանց պարտավորություն,որը մարել է,այսինքն սնանկության վարույթը հասել է իր տրամաբանական ավարտին,օրենքով սահմանված կարգով:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն պահանջին,որ բերված փաստերի հիմքով սկսել կառավարչի որակազրկման գործընթաց,ապա նշեմ,որ նման գործընթացի սկիզբ կարող է հանդիսանալ օրենքի խախտումները այլ ոչ թե առանց որևէ մի ապացույցի մտածածին տարակուսանքները, որը չի կարող մինչև անգամ կարգապահական վարույթ սկսելու հիմք հանդիսանալ:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը և Հ.Գևորգյանը նույնպես համաձայնեցին այն մտքին,որ դիմումի փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ դրանք բավարար չեն կարգապահական վարույթ հարուցելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.«Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 17/17-04 դիմումի հիմքով «Ակադեմիկոս Ի.Վ.Եղիազարյանի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»ՓԲԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ՝ Գևորգ Ֆելիքսի Գևորգյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մերժել՝«Կարգապահական վարույթի անցկացման Կարգի» 2-րդ կետով սահմանված փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի Նախագահ՝Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան